ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 փետրվարի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

12
(3221)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՉՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՎ ՄԻՊ-Ը ՍՊԱՍՈՒՄ Է

Այս տարվա փետրվարի 3-ին երկու քաղաքացի շտապօգնությամբ տեղափոխվել էին հիվանդանոց, սակայն չէին հոսպիտալացվել: Պաշտոնական հիմնավորումը՝ ալկոհոլի ազդեցություն: Իսկ մարդու իրավունքների պաշտպանը, իրավական գնահատականի փոխարեն, սահմանափակվում է նամակներ ուղարկելով:

«Ժողովուրդ» օրաթերթի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից հայտնել են, որ Երեւանի «Արմենիա» բժշկական կենտրոնում արձանագրված միջադեպը ուսումնասիրվել է մեր դիմումից հետո:

Մինչդեռ ալկոհոլ օգտագործած լինելու հանգամանքը ինքնին չի կարող հանդիսանալ բուժօգնություն չստանալու օրինական հիմք, հատկապես շտապօգնության միջոցով տեղափոխման պարագայում:

ՄԻՊ-ից հայտնել են, որ բժշկական կենտրոնից պահանջվել է պարզաբանում, ստացված տեղեկատվությունն ընդունվել է ի գիտություն, ինչպես նաեւ հարցի առնչությամբ գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահության նախարարություն: Այժմ սպասվում է նախարարության պատասխանը:

Այսպիսով, օմբուդսմենի արձագանքը տվյալ փուլում սահմանափակվել է նամակագրությամբ: Սակայն հանրային հնչեղություն ունեցող այս հարցում դեռ չկա հստակ դիրքորոշում՝ խախտվել է արդյո՞ք առողջության պահպանման իրավունքը, անհետաձգելի բուժօգնության մատչելիությունը կամ առկա՞ է խտրական վերաբերմունք, թե ոչ:

Փաստացի արձանագրված է, որ ալկոհոլ օգտագործած քաղաքացիներին հիվանդանոցային բուժօգնություն չի տրամադրվել: Իսկ ՄԻՊ-ի ինստիտուտը, որը պետք է հանդես գա որպես մարդու իրավունքների պաշտպանության անկախ երաշխավոր, այս փուլում սահմանափակվում է միջնորդավորված հաղորդակցությամբ:

Բայց օմբուդսմենից հանրային ակնկալիքը, վստահաբար, նամակագրությունը չէ:

Շուրջ մեկ ամիս է՝ Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի աշխատակիցները գործադուլ են իրականացնում: Նրանք պահանջում են աշխատավարձի բարձրացում եւ աշխատանքային պայմանների բարելավում: Գործադուլ իրականացնողներն ArmLur.am-ի հետ զրույցում նշեցին, որ իրենց կատարած աշխատանքի դիմաց ստացած աշխատավարձը չի համապատասխանում իրենց կատարած աշխատանքի ծանրաբեռնվածությանը: Մեր զրուցակիցը նաեւ հայտնեց, որ երբեմն էլ աշխատանքային ժամերից դուրս են աշխատանք կատարում, սակայն չեն վարձատրվում: Բողոքի ակցիան նրանք շարունակելու են այնքան ժամանակ, մինչեւ իրենց խնդրին հստակ լուծում տրվի: Առավել մանրամասները մեզ հայտնում է ՀՀ Լեռնագործների, մետալուրգների եւ ոսկերիչների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության ղեկավար Էդուարդ Փահլեւանյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Հայ-ռուսական հարաբերություններում նկատվող քաղաքական լարվածության ֆոնին վերջին շրջանում ակտիվացել են շփումները ռուսական կողմի հետ: Մեկ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է հանդիպումներ անցկացնում, մեկ Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանն է մեկնում Մոսկվա: Ալեն Սիմոնյանը Ռուսաստանին անգամ «եղբայրական ազգ» անվանեց, սակայն քաղաքական այդ ժեստը շոշափելի արդյունք չտվեց: Փոխարենը Նիկոլ Փաշինյանը սեփական հարկի տակ ընդունեց ռուս գործարար Վլադիմիր Եվտուշենկովին եւ ստացավ թանկարժեք նվեր: Գործարարը վարչապետին նվիրել է 400 հազար դրամ արժողությամբ «Երկնագույն պսակ» անվանումով թեյի սպասքի հավաքածու, որը պատրաստված է «Գժել» ասոցիացիայի կողմից եզակի օրինակով, բարձրակարգ ճենապակուց եւ ոսկեզօծմամբ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ կառավարությունը նախատեսում է գրեթե 200 մլն դրամ ֆինանսական աջակցություն հատկացնել «Սեւան Ստարտափ Սամմիթ»-ին (SSS) նաեւ 2026 թվականին: «Սեւան Ստարտափ Սամմիթ 2026»-ը մեկնարկելու է հուլիսի 26-ին Սեւանի ափին, որը համախմբելու է տեխնոլոգիական ոլորտի առաջատար մասնագետներին, ներդրողներին եւ ընկերություններին աշխարհի տարբեր երկրներից՝ ստեղծելով համագործակցության, գիտելիքի փոխանակման եւ նորարարության բացառիկ միջավայր: «Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել է եւ պարզել, թե ինչ ուշագրավ ծախսեր են նախատեսվել «Սեւան Ստարտափ Սամմիթ 2026»-ի համար: Միջոցառման հիմնական մեծ բեմը, որը պետք է տեղակայված լինի միջոցառման հիմնական տարածքում եւ կահավորված լինի լեդ էկրաններով, արժեցել է 24 մլն դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ԶՐՈՒՅՑ

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐ ՉԿԱՆ»

2026 թվականի խորհրդարանական ընտրությունները դեռ ակտիվ փուլ չեն մտել, սակայն ակտիվացել են քաղաքականություն մուտք գործելու հայտ ներկայացրած ուժերը:

ArmLur.am-ը առաջիկա քաղաքական զարգացումների, նոր ձեւավորվող ուժերի նկատմամբ քրեական գործերը որպես մահակ օգտագործելու մասին զրուցել է «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Գագիկ Մելքոնյանի հետ:

-Պարոն Մելքոնյան, ի՞նչ եք պատրաստվում անել խորհրդարանական ընտրություններին եւ արդյոք վստահ եք, որ պատվիրակները կքվեարկեն Ձեր օգտին եւ Դուք կլինեք առաջին 50 անվանացանկում:

-Պատվիրակները բոլորը մեկը մյուսին ճանաչում են, իրենք են որոշելու, թե ում կընտրեն, ես չեմ կարող վստահաբար ասել՝ ինձ ընտրելու են, թե ոչ, լավը այն է, որ այդտեղ խաբել չի լինելու, եւ հիշենք, որ ժողովուրդն է ընտրելու:

-Նախընտրական փուլում սկսել է քաղաքական ակտիվացումը տարբեր ուժերից, Դուք ո՞ւմ եք մրցակից համարում խորհրդարանական ընտրություններում:

-Նրանք, ովքեր արդեն ընտրական դաշտում են, մրցակից են համարվում: Իսկ թե ով կարող է հաղթել, ամեն դեպքում, դա էլ չեմ կարող ասել, քանի որ նրանք հիմա ուժերը կենտրոնացնում են, որոշել են մի քանի կուսակցությունով մտնեն, այսինքն իրենց հետաքրքրում է Գյումրիի տարբերակը, բայց ասեմ, որ Գյումրիի տարբերակը չի աշխատելու, ինչպես չաշխատեց Էջմիածնում: Ժողովուրդը լավ է հասկանում ամեն ինչ, Գյումրին ժողովրդի համար դարձավ չափանիշ, որ իրենք չեն թողնի երկրորդ Գյումրին կրկնվի:

-Պարոն Մելքոնյան, արդյոք քաղաքական ճնշում չեք համարում, երբ ինչ-որ մեկը խոսում է՝ քրեական գործ է, ապօրինի գույքի վերաբերյալ դատախազության հայտարարություն, սա քաղաքական ճնշում չէ՞ ընդդիմադիր գործիչների նկատմամբ: Կամ ինչո՞ւ միայն այս տարի 19 քաղբանտարկյալ ունեցավ Հայաստանը:

-7 տարի գնում է այդ պրոցեսը, ես չեմ տեսել կամ չեմ լսել, որ Հայաստանում կա քաղբանտարկյալ, Բագրատ Սրբազանը տեռորիստ է, Միքայել Աջապահյանը կոչ էր անում մարդկանց սպանելու, հեղափոխություն անելու, այդ ամենը ապացուցված է եղել: Սամվել Կարապետյանը նույնպես քաղբանտարկյալ չէ, երբ որ նա ասում է՝երբ դուք չեք կարողանում քաղաքական ձեւով ձեր հարցերը լուծեք, մենք մեր ձեւով կլուծենք, ես ուզում եմ հասկանալ՝ իրենց ձեւովը որն է:

-Պարոն Մելքոնյան, մամուլը գրել էր, որ Ձեր թոռնիկը դանակահարության է մասնակցել, եւ վիրավոր անձը հայտնել էր, որ Ձեր թոռնիկն է եղել: Կասե՞ք՝ այդ պատմությունը որ փուլում է գտնվում:

-Այդտեղ դանակահարության խնդիր չի եղել, վարչապետի հանձնարարականով օբյեկտիվ մինչեւ վերջ պետք է գնան, քննչական կոմիտեի նախագահի անմիջական հսկողության տակ է եղել, ամեն ինչ տեսախցիկով երեւում է, թե ինչ է կատարվել. ընկերական կատակի արդյունքում է եղել այդ ամենը: Քրեական գործը կարճվել է, այդտեղ չի եղել դանակահարություն, դանակ հասկացողությունը բացառված է:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԱԴԱՄԱՆԴՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ ԿԱՇԱՌՔԸ

ArmLur.am-ը հարց է ուղղել ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին. «Տեղյա՞կ եք, թե Ձեր նախարարությունում ինչ է կատարվում, կոռուպցիա կա»:

«Ես ռիսկը տեսել եմ, ասել եմ՝ պետք է ստուգել, եւ բացահայտվել է»,- նշել է Պապոյանը:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել էր, որ կոմիտեում քննվող քրեական վարույթի նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության համապատասխան վարչության պաշտոնատար անձը, օգտագործելով իր ծառայողական լիազորություններն ու դրանցով պայմանավորված ազդեցությունը, տնտեսվարողի օգտին ապօրինի գործողություն կատարելու համար նրանից կաշառք է ստացել:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ Հնդկաստանից Հայաստանի Հանրապետություն բնական մշակված ադամանդների ներմուծման համար պետական վերահսկողական ակտ կազմելու գործընթացում խոչընդոտներ չստեղծելու եւ նշված ապրանքատեսակի ներմուծման ընթացքն արագացնելու համար վերը նշված պաշտոնատար անձը 2025 թվականի մայիսի 13-ին «Զվարթնոց» օդանավակայանում կաշառք է ստացել տնտեսվարողից:

Էկոնոմիկայի նախարարության պաշտոնայային մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, իսկ կաշառք տված անձին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԻՍՐԱՅԵԼԸ ՄԻԱՑԱՎ TRIPP–ԻՆ

Իսրայելը միացել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի նախաձեռնած «Խաղաղության խորհրդին»: Այս մասին հայտարարել է Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն Վաշինգտոն կատարած այցի ժամանակ, որտեղ հանդիպել է ԱՄՆ ղեկավարի, ինչպես նաեւ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հետ:

«Հանդիպեցի ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի հետ Վաշինգտոնի Բլեյր Հաուսում: Սպիտակ տանը նախագահ Թրամփի հետ իմ հանդիպումից առաջ ես համաձայնագիր ստորագրեցի Իսրայելի՝ Խաղաղության խորհրդին միանալու վերաբերյալ: Մենք կշարունակենք ամրապնդել Իսրայելի եւ Միացյալ Նահանգների միջեւ անխզելի դաշինքը»,- նշել է Նեթանյահուն X-ում կատարած գրառման մեջ:

Reuters-ը հայտնում է, որ արդեն Սպիտակ տանը կայացած հանդիպմանը Նեթանյահուն եւ Թրամփը քննարկել են Իրանի հարցը:

Խաղաղության խորհուրդն իր առաջին նիստը կանցկացնի փետրվարի 19-ին Վաշինգտոնում՝ քննարկելու Գազայի վերակառուցման հարցը:

Հայաստանը նույնպես Խաղաղության խորհրդի անդամ է: ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել է, որ ինքը եւս մասնակցելու է Վաշինգտոնում կայանալիք նիստին:

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԸ

ArmLur.am-ին «Հաղթանակ» խմբակցության ղեկավար Սեւակ Խաչատրյանը հայտնում է, որ փետրվարի 11-ին Էջմիածնում ձերբակալվածներից 6-ի նկատմամբ կիրառվել է տնային կալանք՝ գրավով, իսկ մեկ հոգու ազատ են արձակել:

«Յոթ հոգու էին ներկայացրել կալանքի սանկցիայով: Վեցին տնային կալանք է տրվել՝ գրավով, մեկին ազատ են արձակել, իսկ մնացածներն էլ որպես վկա են այս քրեական գործի շրջանակներում»,- ասաց Սեւակ Խաչատրյանը:

Հիշեցնենք, որ փետրվարի 11-ին ձերբակալվել էին «Հաղթանակ» դաշինքի ավագանու անդամների ցուցակում ընդգրկված անձինք, ինչպես նաեւ դաշինքին աջակցողներ:

Ինչպես հայտնել էր «Հաղթանակ» խմբակցության ղեկավար Սեւակ Խաչատրյանը՝ ձերբակալվածների հստակ թիվ չկար, նշում էին, որ 10-ից ավելի էր:

Ի՞նչ մեղադրանք է առաջադրվել ձերբակալվածներին. Խաչատրյանը հայտնեց, որ ինքը տեղեկություններ չունի, բայց, ըստ ներքին խոսակցությունների, նրանք օգտագործել են իրենց թիմի մարդկանց հեղինակությունն ու դիրքը՝ Վաղարշապատի համայնքապետի ընտրություններում քվե ապահովելու՝ հօգուտ իրեն՝ Սեւակ Խաչատրյանի:

Տեղեկացնենք, որ ձերբակալվածները գտնվում էին Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի Քննչական բաժնում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃՆՇՄԱՆ ՏԱԿ

Արքեպիսկոպոս Գալստանյանի եւ մյուսների գործով գործընթացը գտնվում է մեծ քաղաքական ճնշման տակ: Այս մասին դատարանում հայտարարել է փաստաբան Հովհաննես Խուդոյանը:

Իրավաբանը նշել է, որ խորհրդարանում հնչել են գործընթացին եւ մեղադրանքի էությանը վերաբերող տասնյակ հայտարարություններ, որոնք չեն համապատասխանում իրականությանը, խախտում են անմեղության կանխավարկածը եւ ցուցադրում են քաղաքական ճնշումը դատարանի նկատմամբ՝ անկախ նրանից, թե ում դեմ է այն ուղղված՝ դատարանի, դատախազության, թե հանրային կարծիքի:

«Հայտարարում եմ, որ նման ոճով հանդես եկած բոլոր անձինք ստախոս են եւ չեն կարող հաստատել իրենց խոսքերը: Սա ուղղակի միջամտություն է գործընթացին եւ էլ ավելի մեծ կասկածի տակ է դնում օբյեկտիվությունը՝ չթողնելով արդարադատության որեւէ հույս: Ապագայում սա հիմք կդառնա ՄԻԵԴ-ում (Մարդու իրավունքների եվրոպական դատարան) գործի վերանայման համար: Դատարանն ունի գործի կարճման գործիքակազմ, ինչի վերաբերյալ ես միջնորդություն կներկայացնեմ հետագայում: Նման պայմաններում դատավարությունը շարունակվել չի կարող: Գործում չկան փաստեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ նման հայտարարությունների համար», - ընդգծել է փաստաբանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՋԱՏ Է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵԼ

Ամերիկյան փոքր հզորության ԱԷԿ-ների տեխնոլոգիան օգտագործելու Հայաստանի ընտրությունը հարցեր է առաջացնում՝ ճեպազրույցի ժամանակ ասել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

«Վաշինգտոնի կողմից առաջարկվող փոքր հզորության ԱԷԿ-ներ գոյություն չունեն ոչ միայն ԱՄՆ տարածքում, դրանք առհասարակ սկզբունքորեն գոյություն չունեն՝ դրանք միայն թղթի վրա են»,- ասել է Զախարովան: Նա նշել է, որ Երեւանում հայտարարված՝ 9 միլիարդ դոլար արժողությամբ փոքր մոդուլային ռեակտորների կառուցման նախագծի վերաբերյալ որեւէ կոնկրետ մանրամասն չի ներկայացվել. «Դա լրացուցիչ հետաքրքրություն առաջացրեց թեմայի շուրջ: Ի՞նչ են իրենցից ներկայացնում այդ ռեակտորները եւ որտե՞ղ են դրանք արդեն շահագործվում: Մի շարք հայկական լրատվական ռեսուրսներ շտապեցին լուրը մատուցել որպես Վաշինգտոնի կողմից հանրապետության տնտեսության մեջ կատարվող աննախադեպ ներդրում: Սակայն առանցքային հարցը նախագծի ֆինանսական մոդելն է:

Ռուսական կողմի ունեցած տեղեկություններով՝ խոսքը ոչ թե ԱՄՆ-ի ուղղակի ներդրումների, այլ մի սխեմայի մասին է, որի դեպքում վճարելու է հայկական կողմը: Ենթադրվում էր, որ ֆինանսավորումն իրականացվելու է TRIPP հիմնադրամի միջոցով, որը, ինչպես նախկինում հայտարարվել էր, ստեղծվում է ենթակառուցվածքային նախագծերի իրականացման համար: Սակայն այս պահին բուն հիմնադրամը դեռեւս ստեղծված չէ»:

«ԱՐԿՏԻԿԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ»

Ֆրանսիան կմասնակցի ՆԱՏՕ-ի «Արկտիկական ժամապահ» գործողությանը դաշինքի մյուս անդամների հետ միասին: Այս մասին հայտարարել է Ֆրանսիայի պաշտպանության նախարար Կատրին Վոտրենը Բրյուսելում ՆԱՏՕ-ի երկրների պաշտպանության նախարարների նիստին ժամանելիս:

«Ակնհայտ է, որ Ֆրանսիան ՆԱՏՕ-ի (մյուս երկրների) հետ միասին կմասնակցի «Արկտիկական ժամապահ» գործողությանը», - Վոտրենի խոսքերն է մեջբերում «ՌԻԱ Նովոստի» գործակալությունը: Եվրոպայում ՆԱՏՕ-ի միացյալ զինված ուժերի գերագույն հրամանատարությունը հայտարարել էր, որ դաշինքը սկսել է «Արկտիկական ժամապահ» գործողությունը՝ տարածաշրջանում իր ներկայությունն ուժեղացնելու համար:

Ավելի վաղ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հայտարարել էր, որ Ռուսաստանը կարող է միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ ռազմատեխնիկական բնույթի, եթե Գրենլանդիայում ստեղծվի ռազմական ներուժ Ռուսաստանի դեմ:

ԾԱՂՐ ՈՒ ԾԻԾԱՂ

ՄՈՊԵԴՆԵՐՈՎ ՇՏԱՊՕԳՆՈՒԹՅՈՒՆ

Ըստ մասնագետների՝ առողջապահության ոլորտում ծաղր ու ծիծաղ առաջացնող նախագիծ է մոպեդներով կատարվող շտապօգնության ծառայության ներդրումը:

Երեւանյան խցանումների պայմաններում շտապօգնության ծառայության արագ արձագանքման համար շուտով կօգտագործվեն մոպեդները: Երեկ՝ տարեկան ամփոփիչ ասուլիսի ժամանակ, այդ մասին ArmLur.am-ի հարցին ի պատասխան՝ ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը: Այս մասին առաջին անգամ խոսվեց 2024 թվականին, եւ այն ժամանակ եւս «շուտով» պետք է ներդրվեր նախագիծը: Երեւանի շտապօգնության ծառայության կանչերը 2023-ի համեմատ 2024 թվականին շուրջ 14 տոկոսով ավելացել էին, որն էլ այդ ներդրման հիմնական պատճառն է դարձել:

«Առողջության իրավունքի իրավապաշտպան» ՀԿ նախագահ, առողջապահության փորձագետ Անուշ Պողոսյանը կարծում է, որ այս նախագիծը չի աշխատելու հայաստանյան պայմաններում, որովհետեւ ՀՀ-ում մոպեդավար բժիշկներ գտնելը խնդիր է լինելու: Իրենք հույսները դրել են կլինիկական օրդինատորների վրա, որոնք աշխատում են շտապօգնության կայաններում, այսինքն՝երիտասարդ տղաների վրա:

«Օրինակ՝ այն բուժառուները, որոնք քրոնիկական հիվանդություններ եւ հիվանդանոցային բուժման կարիք չունեն, բայց բարձր ջերմություն ունեն, այս պարագայում բուժակը մոպեդով ավելի արագ եւ օպերատիվ կարող է հասնել տեղ, չափել ջերմությունը, անհրաժեշտության դեպքում խորհրդակցել բժշկի հետ եւ տալ համապատասխան դեղորայք»,- այս մասին Երեւանի քաղաքապետարանի առողջապահության վարչության պետն էր հայտարարել 2024-ին:

Հարկ է նշել, որ ըստ պաշտոնական տվյալների՝ յուրաքանչյուր 20 հազար բնակչին նախատեսված է 1 շարժակազմ: Պաշտոնական տվյալներով՝ Երեւանի բնակչությունը 1 միլիոն 700 հազար է, եւ պետք է մոտ 53-55 շարժակազմ:

Ավանեսյանը չառարկեց, որ շտապօգնության համակարգը բարելավման կարիք ունի:

Կառավարությունը շուտով համապատասխան որոշում կընդունի: Նախարարի խոսքով՝ լինելու է մեկ անձ՝ առաջին օգնության պայուսակով, որը հրատապ բուժօգնություն կտրամադրի:

Հետաքրքիրն այն է, որ չի խոսվում՝ մոպեդներով խիտ երթեւեկության պայմաններում տեղաշարժի բարձր ռիսկային լինելու մասին: Մինչ այժմ նախարարությունը չի ներկայացրել՝ արդյոք իրականացվել է ճանապարհային անվտանգության գնահատում եւ ինչ պաշտպանիչ միջոցներ են նախատեսվում բուժաշխատողների համար: Արդյոք պետք է ունենալ վարորդական իրավունքի վկայական: Հարց է առաջանում՝ արդյոք մոպեդների կիրառումը խնդրի երկարաժամկետ լուծում է, թե ժամանակավոր միջոց: Թեեւ նախարարությունը նախաձեռնությունը ներկայացնում է որպես օպերատիվ արձագանքման նոր մեխանիզմ, դրա արդյունավետությունն ու անվտանգությունը դեռեւս պահանջում են հստակ հաշվարկներ եւ հանրային քննարկում, այնինչ կառավարությունը հրատապ այն ընդունելու որոշում ունի:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՈՉ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Եվրախորհրդարանի մի շարք պատգամավորներ համատեղ հայտարարություն են տարածել Ադրբեջանի կողմից հայ գերիների «դատավճիռների» վերաբերյալ:

«Փետրվարի 5-ին, Բաքվի ռազմական դատարանը երկարաժամկետ ազատազրկման դատավճիռներ կայացրեց 15 հայ բանտարկյալների նկատմամբ, որոնք դեռեւս պահվում են Ադրբեջանում եւ ձերբակալվել են ԼՂ հակամարտության համատեքստում: Մենք խորապես ցավում ենք այս որոշման համար, որը ներառում է հինգ ցմահ ազատազրկման դատավճիռ:

Անցյալ տարի Ադրբեջանի ղեկավարությունը նշանակալի քայլեր ձեռնարկեց Հայաստանի հետ խաղաղության եւ հաշտեցման ուղղությամբ՝ ստորագրելով Վաշինգտոնի հռչակագիրը, նախաստորագրելով խաղաղության համաձայնագրի տեքստը եւ թույլ տալով, տասնամյակների ընթացքում առաջին անգամ, իր տարածքից բեռների տարանցումը դեպի Հայաստան: 2026 թվականի հունվարին ազատ արձակվեցին Ադրբեջանում բանտարկված չորս հայեր, որոնք 2020 եւ 2023 թվականներին ձերբակալվել էին:

Միայն անցյալ շաբաթ Ադրբեջանի նախագահը, Հայաստանի վարչապետի հետ միասին, արժանացավ 2026 թվականի Զայեդի անվան մարդկային եղբայրության մրցանակին՝ «ի նշան խաղաղությունը խթանելու իրենց հետեւողական ջանքերի»:

Այս ոգով մենք կոչ ենք անում Ադրբեջանի իշխանություններին շարունակել օգտագործել առկա դրական դինամիկան եւ ազատ արձակել Ադրբեջանի կալանքի տակ գտնվող բոլոր հայ ձերբակալվածներին: Նրանց ազատ արձակումը կլինի բարի կամքի նշանակալի ժեստ եւ եւս մեկ կարեւոր քայլ Հարավային Կովկասում երկարատեւ խաղաղության հասնելու ուղղությամբ»:

ԱՄՆ–ԻՆ ԿՓՈԽԱՆՑԻ

Հայաստանն առաջիկա օրերին ԱՄՆ-ին կփոխանցի իր դիտարկումները՝ կապված TRIPP-ի համաձայնագրի նախագծի հետ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ այս մասին ասել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ՝ պատասխանելով «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վահագն Ալեքսանյանի հարցին:

«TRIPP-ի մասով առաջնորդվելու ենք հետեւյալ ժամանակացույցով՝ առաջիկա օրերին մենք Միացյալ Նահանգների գործընկերներին կփոխանցենք TRIPP-ի համաձայնագրի նախագծի հետ կապված մեր դիտարկումները: Ընդ որում, համաձայնագրի նախագիծը հիմնված է լինելու երկու երկրների կառավարությունների հաստատած իրագործման շրջանակի վրա, որն էլ իր հերթին հիմնված է օգոստոսի 8-ի հռչակագրի վրա»,-ասել է վարչապետը:

Փաշինյանի խոսքով՝ սկսվել է նաեւ TRIPP նախագծի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը եւ գնահատումը, որը շատ կարեւոր է նախագծի իրագործման համար: Անդրադառնալով ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում համագործակցությանը՝ վարչապետն ասել է. «Նաեւ միջուկային էներգետիկայի ոլորտում կտեսնենք, թե ինչպես ենք շարունակում մեր համագործակցությունը: Այստեղ մի քանի գործընկերների հետ ունենք երկխոսություն: Իհարկե, որոշում կկայացնենք այն նախագծի օգտին, որն առավելագույնս համապատասխանում է Հայաստանի շահերին»:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՕՂԱԿԸ ՍԵՂՄՎՈՒՄ Է

ԳԱՌՆԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ ՔՆՆՉԱԿԱՆՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Սահմանադրական կարգի հիմունքների, պետության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչությունում լայնածավալ քննություն է սկսվել: Քննչական կոմիտե են հրավիրում տարբեր անձանց: Եւ ահա, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն, բեւեռական վարույթով հարցաքննության են հրավիրել ԱԺ պատգամավոր Գառնիկ Դանիելյանին և փորձել հարցաքննել, սակայն, մեզ հասած տեղեկությունների համաձայն, Գառնիկ Դանիելյանը հրաժարվել է ցուցմունք տալ:

Ավելին, ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը WhatsApp հեռախոսային խոսակցության մասին է հարցնում, նրանք հրաժարվում են խոսել: Թե ինչ հեռախոսային խոսակցության մասին է խոսքը, այս պահին չենք հրապարակում:

Նշենք, որ «Բագրատ Սրբազանի եւ 17 արդարների» գործից կա անջատված մաս, եւ այդ քրեական վարույթը քննչական կոմիտեում շարունակվում է: Նշենք նաեւ, որ 2025 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ, ԱԺ պատգամավոր Իշխան Սաղաթելյանը ՀՀ քննչական կոմիտեում հարցաքննվել էր «Սրբազան պայքարի» գործի շրջանակում: Վերջինս նշել էր, որ հրաժարվել է որեւէ ցուցմունք կամ բացատրություն տալ. «Հայտարարել եմ՝ դա քաղաքական գործ է, իրավական որեւէ պրոցես տեղի չի ունենում, դա ընդամենը քաղաքական պատվերի շրջանակներում հետապնդումներ են, եւ ես հրաժարվում եմ որեւէ բացատրություն տալուց»:

Այս իրավիճակում առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ եթե պատգամավորին կանչել են հարցաքննության որեւէ քրեական վարույթով եւ այն էլ՝ կասկածանքի շուրջ, հարցաքննության ընթացքում իր դեմ հարցեր են ուղղել, իսկ վերջինս էլ, օգտվելով իր դատավարական իրավունքից, հրաժարվել է ցուցմունք տալ, ապա դա ենթադրում է, որ նրա նկատմամբ փաստացի քրեական հետապնդում սկսելու գործընթաց է տեղի ունենում:

Սակայն ստացվում է, որ նախաքննական մարմինը, ըստ էության, այս իրավիճակում սխալ մոտեցում է որդեգրել եւ պատգամավորին անձեռնմխելիությունից զրկելու գործընթացը չիրականացնելով՝ նրան կասկածանքի վերաբերյալ հրավիրում է եւ հարցաքննում՝ տալով փաստացի մեղադրյալի կարգավիճակ եւ օժտելով մեղադրյալի իրավունքներով ու պարտականություններով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԱՊՕՐԻՆԻ ՎԱՃԱՌՔ

Համայնքային ոստիկանության Տարոնի բաժնի ծառայողները փետրվարի 10-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Վանաձոր քաղաքի Գրիգոր Լուսավորչի փողոցում գտնվող շուկայի պահեստային տարածքում 46-ամյա տղամարդը, առանց համապատասխան թույլատվության եւ լիցենզիայի, զբաղվում է ալկոհոլային սպիրտի վաճառքով:

Բացատրական աշխատանքի արդյունքում 46-ամյա տղամարդը հայտնել է, որ ոստիկանների տեղեկությունը հավաստի է, եւ նշված վայրում վաճառքի համար նախատեսված 800 լիտր ալկոհոլային սպիրտ կա:

Վանաձորի 46-ամյա բնակիչը կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել է նախաքննական մարմին:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Մասիս համայնքի նախկին ղեկավար Դավիթ Համբարձումյանի եղբայրը՝ Գոռ Համբարձումյանը, 1 ամսով կալանավորվել է, այս մասին լրատվամիջոցներին հայտնում են Քննչական կոմիտեից:

Հիշեցնենք, որ փետրվարի 11-ին Դավիթ Համբարձումյանի դատական նիստից անմիջապես հետո ձերբակալվել էր նրա եղբայրը:

Փաստաբան Գայանե Պապոյանը հայտնել էր, որ տեղի ունեցածը արդարադատություն չէ, այլ քաղաքական հաշվեհարդար. «Առաջադրված մեղադրանքը շինծու եւ ակնհայտ անհիմն է, որեւէ աղերս չունի իրականության հետ»:

Ավելի վաղ ՔԿ-ից հայտնել էին, որ Գոռ Համբարձումյանի նկատմամբ վարույթ է նախաձեռնվել Քրեական օրենսգրքի 204-րդ հոդվածի 1-ին մասով (անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիությունը խախտելը), 457-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը), 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախությունը) եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով փողերի լվացումը):

ԽՍՏԱՑՆԵԼ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ 2026 թվականի փետրվարի 11-ին ամփոփվել են Արմավիրի մարզի դատախազության 2025 թվականի աշխատանքները:

Ամփոփմանը ներկա են եղել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Եղիազար Ավագյանը, Արմավիրի մարզի դատախազ Սեւակ Պողոսյանը, Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանը, Դատախազության գլխավոր քարտուղար Միհր Ափրիկյանը, Ներքին գործերի նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Քննչական կոմիտեի մարզային կառույցների ղեկավարները, մարզի դատախազության դատախազները եւ այլք:

Սեւակ Պողոսյանը, ներկայացնելով Արմավիրի մարզի դատախազության 2025 թվականի աշխատանքների զեկուցագիրը, նշել է, որ 2025 թվականին Արմավիրի մարզում նախաձեռնվել է 3669 քրեական վարույթ (2024 թվականին՝3671 քրեական վարույթ):

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ դատարան է հանձնվել 1,310 քրեական վարույթ՝ 1,345 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 1,307 քրեական վարույթ՝ 1,374 անձի վերաբերյալ): Նշված վարույթներից 92-ը ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ են:

Այս համատեքստում Արմավիրի մարզի դատախազն ընդգծել է, որ 2025 թվականին մարզում գրանցված սպանության բոլոր 7 դեպքերը բացահայտված են, դրանցից 5-ն ուղարկված են դատարան:

2025 թվականին դատարաններում ավարտվել է 1,050 քրեական գործ՝ 1,085 անձի վերաբերյալ (2024 թվականին՝ 986 քրեական գործ՝ 1,050 անձի վերաբերյալ):

Արմավիրի մարզի դատախազի տեղեկացմամբ, 2025 թվականին քրեական վարույթներով պետությանը պատճառված վնասից վերականգնվել է 171 միլիոն 293 հազար դրամ:

Պետական (համայնքային) շահերի պաշտպանության ոլորտում կատարված աշխատանքների արդյունքում 2025 թվականին վերադարձվել է 6 միլիոն 750 հազար դրամ, դատարան է ներկայացվել 8 քաղաքացիական հայց. բոլոր հայցերը դատարաններում քննության փուլում են: Հայցերից բացի, պետական (համայնքային) շահերի պաշտպանության ոլորտում մարզի դատախազության կողմից իրականացվում է 12 ուսումնասիրություն:

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը, ի թիվս այլնի, մի շարք հանձնարարականներ է տվել մարզի դատախազին եւ դատախազության դատախազներին՝ ուղղված մարզում քրեական քաղաքականությունը խստացնելուն, հանցավորության կանխարգելմանն ու բացահայտմանը, ինչպես նաեւ պետական եւ համայնքային շահերի պաշտպանության ուղղությամբ աշխատանքներն ակտիվացնելուն:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԳՈՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐ

Դեռեւս անցած տարվա դեկտեմբերին Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ մի տղամարդ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքում ավտոմեքենաներից կատարում է գողություններ: Հետագա միջոցառումներով պարզվեց տղամարդու ինքնությունը՝ Օհանովի փողոցի բնակիչ էր, 29 տարեկան: Պարզվեց նաեւ, որ նա միայնակ չի կատարել գողությունները: Նախաձեռնվեց քրեական վարույթ: Հետագա լայնածավալ օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում հունվարի 23-ին Գարեգին Նժդեհի փողոցում ձերբակալվեց 29-ամյա տղամարդը: Համայնքային ոստիկանության Մալաթիայի բաժին հրավիրվեցին նաեւ հանցակցության մեջ կասկածվող 35-ամյա կինն ու 23-ամյա երիտասարդը: Ավելի ուշ կատարված խուզարկությամբ 23-ամյա երիտասարդի վարած ավտոմեքենայում հայտնաբերվել է գողոնի մի մասը՝ ավտոդետալներ, նաեւ ձեռնոցներ, դիմակներ ու պտուտակահաններ: Դատարանի որոշմամբ 29-ամյա տղամարդը կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

***

Ավտոմեքենայից գողության մի դեպք էլ բացահայտել են Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժնի ծառայողները: Գողության վերաբերյալ հաղորդումը ստացվել էր հունվարի 24-ին. Նազարբեկյան թաղամասում կայանված «Շեվրոլե» մակնիշի մեքենայից գողացել էին առջեւի թափարգելը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումներով համայնքային ոստիկանները ստացան հավաստի տեղեկություն, որ հիշյալ գողությունը կատարել է Մոլդովական փողոցի բնակիչ 27-ամյա մի երիտասարդ: Բացատրական աշխատանքի արդյունքում փետրվարի 4-ին նա ներկայացավ Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին՝ ներկայացնելով գողոնը: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

ԹՄՐԱՄԻՔՈՑՆԵՐ

ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի հերթապահ խմբի ծառայողները խուզարկության են ենթարկել հիմնարկ ընդունված կալանավորված անձին: Արդյունքում՝ նրա տաբատի գրպանում գտնվող ծխախոտի տուփի միջից հայտնաբերվել են 6 ծխախոտի գլանակ, 1 ապակյա կաթուցիչ՝ թմրանյութի նմանվող զանգվածի ծխեցված հետքերով, ինչպես նաեւ պոլիէթիլենային տոպրակի մեջ լցված դեղնականաչավուն, թմրանյութի նմանվող խոնավ, բուսական զանգված՝ ընդհանուրը 1.58 գրամ քաշով: Նույն հիմնարկում մեկ այլ կալանավորված անձի անվամբ քաղաքացու կողմից բերված հանձնուքի զննությամբ ծառայողները հայտնաբերել են թմրանյութին նմանվող սպիտակ, փոշենման զանգված՝ խառնված ստվարաթղթե տուփի մեջ գտնվող շաքարավազի հետ: Վերոգրյալ դեպքերի առթիվ ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ, հայտնաբերվածներն ուղարկվել են ՀՀ ՔԿ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հանրապետությունում փետրվարի 11-ից 12-ը բացահայտվել է 171 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՈՐՏԵՂԻ՞Ց Է ՎԵՐՑՐԵԼ

2025թ. նոյեմբերի 19-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել Տավուշի մարզի բնակչության թվի մասին: Մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզի բնակչությունը կազմում է 143.108 մարդ»: Այդ թիվը խիստ ուռճացած է, ոչ արժանահավատ, քանի որ Տավուշի մարզպետարանի գործունեության սկզբի ժամանակ՝ 1996թ. փետրվարի 19-ին, Տավուշի մարզի բնակչությունը եղել է 132 հազար մարդ, Տավուշից արտերկիր արտագաղթի, Երեւան, Հայաստանի այլ վայրեր տեղափոխությունների, բնակչության ցածր ծնելիության, մահվան դեպքերի աճի հետեւանքով անցած 30 տարում Տավուշի մարզի բնակչությունը էական չափով նվազել է: Այդ պատճառով 2025թ. դեկտեմբերի 1-ին մարզի բնակչության վերաբերյալ նոր հարցում կատարեցի Տավուշի մարզպետին: Ի պատասխան՝ մարզպետի աշխատակազմից հայտնեցին. «ՀՀ Տավուշի մարզի բնակչության թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է պետական լիազոր մարմինը, մարզում մշտական առկա եւ հաշվառված բնակչության թվաքանակի վերաբերյալ առաջարկում ենք դիմել պետական լիազոր մարմին»: Բնակչության թվաքանակի հարցով պետական լիազոր մարմինը ՀՀ վիճակագրական կոմիտեն է: Այդ կոմիտեի տվյալներով՝ 2006 թվականի հունվարի 1-ի դրությամբ, նախնական տվյալներով՝ Տավուշի մարզի մշտական բնակչությունը 118 000 է, 2026թ. հունվարի 1-ի դրությամբ՝ մարզում առկա բնակչությունը 103 հազար 600 է: Տավուշի մարզպետը որտեղի՞ց է վերցրել մարզի բնակչության 143 հազար 108 թիվը:

ՔԻՉ ԱՇԱԿԵՐՏ ՈՒՆԵՆ

Տավուշի մարզպետի աշխատակազմից տեղեկացել եմ, որ այս ուսումնական տարում Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների աշակերտների ընդհանուր թիվը 15.468 է: Տավուշի 76 հանրակրթական դպրոցներից այժմ 1-ին դասարան չունի Աճարկուտի հիմնական դպրոցը, 12-րդ դասարան չունեն Չինչինի եւ Բարեկամավանի միջնակարգ դպրոցները: Մարզի հանրակրթական դպրոցներից երկկոմպլեկտ դասարաններ են առկա Աղավնավանքի միջնակարգ, Գոշի եւ Դեղձավանի հիմնական դպրոցներում: Տավուշի 76 հանրակրթական դպրոցների ավելի քան մեկ երրորդը՝ 28 դպրոց, ունեն 100-ից պակաս թվով աշակերտներ, Աճարկուտի հիմնական դպրոցն ունի ընդամենը 13 աշակերտ, Բարեկամավանի միջնակարգ դպրոցը՝ 15, Լուսահովտի հիմնական դպրոցը՝ 28, Իծաքարի հիմնական դպրոցը՝ 29, Գոշի հիմնական դպրոցը՝ 34, Կիրանցի հիմնական դպրոցը՝ 37, Աղավնավանքի միջնակարգ դպրոցը՝ 37, Չինչինի միջնակարգ դպրոցը՝ 41 աշակերտ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԾԱԽՍԵՐ

ԲՏԱ-Ն 42,4 ՄԼՆ ԴՐԱՄ Է ԾԱԽՍԵԼ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը հայտնում է, որ 2026 թվականի մարտի 2-5-ը Իսպանիայի Թագավորության Բարսելոնա քաղաքում կկայանա «Համաշխարհային բջջային կոնգրես 2026-ը (Mobile World Congress Barcelona 2026)», որին մասնակցություն կունենա նաեւ Հայաստանը:

Նախարարությունը «Համաշխարհային բջջային կոնգրես 2026»-ում նախատեսում է ներկայացնել հայկական տեխնոլոգիական էկոհամակարգը եւ հնարավորություն ընձեռել ոլորտային կազմակերպություններին որպես այցելու մասնակցել միջոցառմանը՝ ներկայացնելով իրենց կողմից առաջարկվող արտադրանքը, լուծումները, ինչպես նաեւ նոր գործարար կապեր հաստատելու միջազգային գործընկերների հետ:

Այս միջոցառման անցկացման համար ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը պայմանագիր է կնքել Nuevo Design Event Organizing LLC ընկերության հետ: Պայմանագիրն արժեցել է 94,700 եվրո, որը համարժեք է 42 մլն 400 հազար դրամի:

Որպես կանխավճար տրվել է 28,410 եվրո՝ մոտ 12 մլն 410 հազար դրամ:

Պայմանագիրն իր մեջ ներառում է «Armenia» գրությամբ տաղավարի պատրաստումը՝ հատակից մինչեւ վարդակներ:

Նախարարությունը հոգալու է ցուցահանդեսային տարածքի վարձակալության, կառուցապատման եւ ցուցահանդեսի մուտքի ծախսերը: Ավիատոմսի եւ կեցության հետ կապված ծախսերը հոգալու են ընտրված կազմակերպությունները:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԻՐԱՆԻՆ Է ՓՈԽԱՆՑԵԼ

Օմանի իշխանություններն անուղղակի բանակցությունների առաջին փուլի ավարտից հետո իրանական կողմին փոխանցել են ԱՄՆ-ի մի քանի ուղերձներ: Ինչպես տեղեկանում ենք ՏԱՍՍ գործակալությունից, այս մասին հայտնել է Իրանի Ազգային անվտանգության գերագույն խորհրդի քարտուղար Ալի Լարիջանին:

«Մենք ամերիկացիներին որեւէ նամակ չենք ուղարկել, բայց մեր ընկերները Օմանում փոխանցել են ԱՄՆ-ի որոշ ուղերձներ, որոնք մենք կքննարկենք Թեհրանում», - ասել է նա Իրանի պետական հեռուստատեսությամբ՝ Օման եւ Քաթար կատարած այցերից հետո:

«Ալ-Ջազիրա» հեռուստաալիքին տված հարցազրույցում Լարիջանին նշել է, որ եթե ԱՄՆ-ն հարձակվի Իրանի վրա, իրենք կթիրախավորեն ամերիկյան ռազմաբազաները տարածաշրջանում:

Լարիջանին նաեւ խոսել է Իսրայելի վարչապետի՝ Վաշինգտոն կատարած այցի մասին՝ ասելով, որ «Իսրայելը փորձում է խաթարել բանակցային գործընթացը եւ փնտրում է պատերազմ հրահրելու պատրվակներ»:

Փետրվարի 6-ին Օմանում տեղի է ունեցել Իրանի եւ ԱՄՆ-ի միջեւ միջուկային ճգնաժամի լուծման վերաբերյալ բանակցությունների նոր փուլը: Իրանի պատվիրակությունը գլխավորել է արտաքին գործերի նախարար Աբբաս Արաղչին, իսկ ամերիկյան պատվիրակությունը՝ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հատուկ դեսպանորդ Սթիվեն Ուիթքոֆը: Սպիտակ տունը նախկինում զգուշացրել էր, որ լրջորեն քննարկում է Իսլամական Հանրապետության դեմ ուժի կիրառման հարցը:

ԵՄ-Ն ՀԱՍՏԱՏԵԼ Է

Եվրախորհրդարանի պատգամավորները Ստրասբուրգում կայացած լիագումար նիստում քվեարկել են 2026-2027 թվականներին Ուկրաինային 90 միլիարդ եվրոյի վարկ տրամադրելու օգտին: Այս մասին հաղորդում է «Ինտերֆաքս» գործակալությունը:

Եվրահանձնաժողովի համապատասխան առաջարկը հավանության է արժանացել 458 կողմ, 140 դեմ ձայնով, իսկ 44-ը ձեռնպահ են մնացել:

Եվրախորհրդարանի նիստի նյութերում հիշատակվում է, որ 2025թ. հոկտեմբերի 23-ին 26 անդամ պետությունները Եվրահանձնաժողովին հանձնարարել են հնարավորինս շուտ ներկայացնել Ուկրաինային ֆինանսական աջակցության առաջարկը: Եվրահանձնաժողովն առաջարկել է նման ֆինանսավորման տարբերակներ: Եվրոպական խորհուրդը համաձայնել է Ուկրաինային 90 միլիարդ եվրոյի վարկ տրամադրել 2026-2027 թվականների համար՝ հիմնվելով ԵՄ-ի բյուջեով երաշխավորված կապիտալների շուկայի փոխառության վրա: Դրա հետ մեկտեղ նախօրոք որոշվել էր, որ վարկը կմարվի փոխհատուցումների հաշվին, որոնք ենթադրվում է ստանալ Ռուսաստանից:

Կիեւի համար նախատեսված 90 միլիարդ եվրոյից 60 միլիարդը պլանավորվում է ծախսել Ուկրաինայի պաշտպանության նպատակներով:

Այժմ ԵՄ խորհուրդը պետք է վերջնական պաշտոնական որոշում ընդունի վարկի տրամադրման կանոնակարգի վերաբերյալ:

ՉԻՆԱՍՏԱՆ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Չինաստանը մտադիր է ամրապնդել երկարաժամկետ ռազմավարական գործընկերությունը Հունգարիայի հետ: Այս մասին հայտարարել է Չինաստանի արտաքին գործերի նախարար Վան Ին:

«Չինաստանը կշարունակի լինել Հունգարիայի հուսալի ռազմավարական գործընկերը երկարաժամկետ հեռանկարում: Չին-հունգարական հարաբերությունները, որոնք հիմնված են հարգանքի, հավասարության եւ փոխշահավետ համագործակցության վրա, ունեն հզոր ներքին դինամիկա եւ զարգացման լայն հեռանկարներ»,-ասվում է Չինաստանի ԱԳՆ-ում հրապարակված հայտարարության մեջ Վան Ի խոսքում: Վերջինս փետրվարի 11-ին հանդիպել է Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանի հետ:

Վան Ին Օրբանին է փոխանցել ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինփինի ողջույնը: Դիվանագետը հաստատել է, որ, չնայած բարդ եւ անկայուն միջազգային իրավիճակին, երկու պետությունների բարեկամական հարաբերություններն ու համագործակցությունը կմնան անփոփոխ: Նրա խոսքով՝ դա լիովին համապատասխանում է երկու կողմերի հիմնական շահերին: Օրբանը վերահաստատել է Հունգարիայի աջակցությունը «մեկ Չինաստան» սկզբունքին եւ շահագրգռություն հայտնել չինական ներդրումների ներգրավման հարցում:

● Ըստ ՃՏՊ վիճակագրության՝ փետրվարի 11-ից 12-ը հանրապետությունում գրանցվել է 19 ավտովթար. 2 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին փետրվարի 14-ին նշելու է Տեառնընդառաջի՝ մանուկ Հիսուսի տաճարին ընծայման տոնը, որը Գարեգին Երկրորդ կաթողիկոսի կողմից հռչակվել է նաեւ նորապսակների օրհնության օր:

Ըստ Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի տարածած հաղորդագրության՝ տոնի առիթով Միածնաէջ Մայր տաճարում փետրվարի 13-ին՝ ժամը 16:30-ին, կկատարվի երեկոյան ժամերգություն եւ Տեառնընդառաջի նախատոնակ:

Արարողության ավարտին Մայր Աթոռի միաբանական շենքի շրջափակում կվառվի Տեառնընդառաջի խարույկը:

Փետրվարի 14-ին՝ ժամը 10:30-ին, կմատուցվի Սուրբ եւ Անմահ պատարագ, որի ավարտին կկատարվի նորապսակների օրհնության կարգ:

ՀԱՅԱՍՏԱՆ–ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Արման Խաչատրյանը հանդիպել է Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Բրունո Ֆուքսի հետ:

Այս մասին հայտնում են Ֆրանսիայում ՀՀ դեսպանությունից:

Նշվում է, որ հանդիպմանն անդրադարձ է կատարվել հայ-ֆրանսիական ամուր բարեկամության վրա հիմնված՝ Հայաստանի եւ Ֆրանսիայի միջեւ ռազմավարական բնույթ ունեցող բազմաոլորտ համագործակցության ընդլայնմանը: Կարեւորվել է այդ գործում խորհրդարանական դիվանագիտության դերը եւ Հայաստանի ու Ֆրանսիայի Ազգային ժողովների միջեւ ձեւավորված սերտ համագործակցությունը:

Հաղորդվում է, որ մտքեր են փոխանակվել նաեւ տարածաշրջանային եւ միջազգային օրակարգի մի շարք հարցերի շուրջ: Դեսպան Խաչատրյանը զրուցակցին է ներկայացրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության հաստատմանն ուղղված վաշինգտոնյան համաձայնությունները եւ դրանց շրջանակներում TRIPP նախագծի իրագործման ընթացքը:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ

ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ

Mastercard միջազգային վճարահաշվարկային կազմակերպության ամենամյա ամփոփիչ միջոցառման շրջանակում Հայէկոնոմբանկն արժանացել է գերազանցության մրցանակի հաճախորդների լայն շրջանակում ոլորտային պրոդուկտների առաջխաղացման համար:

2025 թվականը նշանակալի էր Հայէկոնոմբանկի եւ Mastercard-ի երկարամյա համագործակցության խորացման եւ հարաբերությունների ավելի բարձր մակարդակ արձանագրելու տեսանկյունից: Հայէկոնոմբանկի Mastercard քարտատեսակներով գործարքների ծավալն աննախադեպ աճ է գրանցել, ինչն արդյունավետ համագործակցության լավագույն վկայությունն է:

Mastercard-ի հետ գործընկերությամբ Հայէկոնոմբանկը ներկայացրել է նոր պրոդուկտներ եւ առաջարկներ, որոնք մեծ հետաքրքրություն են առաջացրել հաճախորդների շրջանում:

Ճամփորդական փաթեթի շրջանակում ներկայացվել է AEB Mastercard World պրեմիում քարտատեսակը, որը ճանապարհորդական առավելություններին զուգահեռ հնարավորություն է տալիս արտոնյալ պայմաններով (14% տարեկան անվանական տոկոսադրույքով) դրամային վարկային գիծ ստանալ, ինչպես նաեւ 0.5-1% քեշբեք է տրամադրում յուրաքանչյուր անկանխիկ վճարման համար:

Նպատակ ունենալով խթանել Հայէկոնոմբանկի ծառայությունների եւ վճարային գործիքների առաջխաղացումը՝ Mastercard-ի հետ իրականացվել են համատեղ միջոցառումներ եւ արշավներ, որոնք մեծ աշխուժություն են առաջացրել հաճախորդների շրջանում:

Հայէկոնոմբանկի եւ Mastercard-ի համագործակցությունը շարունակական է լինելու՝ բանկային պրոդուկտներն ու ծառայությունները հաճախորդների համար ավելի հասանելի եւ հարմար դարձնելու եւ նորանոր հաջողությունների հասնելու նպատակադրմամբ:

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԿԱՄԱՎՈՐ ԴՈՆՈՐՆԵՐ

«Շնորհակալություն կյանք նվիրելու համար». «Յոլյանի» անվան արյունաբանության եւ ուռուցքաբանության կենտրոնի այս կարգախոսով ոգեշնչված՝ Ակբա բանկի աշխատակիցները միացել են կամավոր արյունատվության ծրագրին: Նախաձեռնությունը նպատակ ունի իրազեկել բոլորին կամավոր արյունատվությանը մասնակցելու կարեւորության մասին:

Հայաստանում յուրաքանչյուր օր փոխներարկվում է միջինում 60 պարկ արյուն, ինչը թույլ է տալիս փրկել տասնյակ մարդկանց կյանքեր: Արյան պահանջը տարեցտարի ավելանում է, զուգահեռ ավելանում է նաեւ արյան դոնորների պահանջը. համալրված արյան բանկ ունենալու համար չափազանց կարեւոր է Հայաստանում դոնորական մշակույթի զարգացումը:

«Առողջապահական համակարգի համար շատ կարեւոր է մշտապես ունենալ համալրված արյան պաշարներ, որպեսզի ոչ մի հիվանդ չտուժի արյան պաշար չլինելու պատճառով: Այդ նպատակով կարեւոր է, որ մեր հասարակության մեջ զարգանա այս մշակույթը: Կամավոր անվարձահատույց դոնորությանը միացել են Ակբա բանկի աշխատակիցները: Կցանկանայի, որ սա օրինակ ծառայեր պետական, մասնավոր, հասարակական կազմակերպությունների համար, որպեսզի բոլորը իրենց ակտիվ մասնակցությունն ունենան արյունատվության գործընթացին եւ մշտապես ունենանք համապատասխան քանակի արյան բաղադրամասեր»,-նշել է ԱՆ «Յոլյան» արյունաբանության եւ ուռուցքաբանության կենտրոնի արյան ծառայության գծով փոխտնօրեն Անդրանիկ Շամիլյանը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆԱՏՕ-ի անդամ երկրների պաշտպանության նախարարները փետրվարի 12-ին կհանդիպեն Բրյուսելում՝ նախապատրաստվելու Անկարայում կայանալիք գագաթնաժողովին:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեն նախօրեին կայացած ասուլիսում հայտնել է, որ այս հանդիպումը կկենտրոնանա այն հարցի վրա, թե ինչպես է դաշինքը նախատեսում հետագայում ավելացնել պաշտպանական ծախսերը:

«Մենք ընդլայնում ենք մեր պաշտպանական արդյունաբերական բազան: Մենք պետք է ավելին արտադրենք: Սա նշանակում է ավելի շատ հակաօդային պաշտպանության համակարգեր, ավելի շատ զինամթերք եւ ավելի ուժեղ մատակարարման շղթաներ դաշինքի ներսում», - շարունակեց Ռյուտեն: Նա հայտնել է, որ հանդիպմանը քննարկվելու է նաեւ Ուկրաինային Հյուսիսատլանտյան դաշինքի աջակցության հարցը: «Ուկրաինան չի կարող միայնակ դիմակայել այս պայքարին կամ ապահովել խաղաղությունը: Եւ այդ պատճառով դաշնակիցները աջակցել են Ուկրաինային գործողություններով, այլ ոչ թե միայն խոսքով: Ուկրաինային տրամադրվող ամբողջ ռազմական աջակցության 99 տոկոսը գալիս է ՆԱՏՕ-ի դաշնակիցներից եւ գործընկերներից, ՆԱՏՕ-ն շարունակում է ամրապնդել այս աջակցության համակարգումը եւ տրամադրումը»,-նշել է Հյուսիսատլանտյան դաշինքի ղեկավարը: Նրա տեղեկացմամբ՝ Ուկրաինայի նոր պաշտպանության նախարար Միխայիլ Ֆեդորովը եւս կմասնակցի հանդիպմանը, ինչպես նաեւ հանդիպմանը ներկայացված կլինի Եվրամիությունը: «Եվրամիությունը ՆԱՏՕ-ի ամենակարեւոր գործընկերն է: Մեր համագործակցությունը, այդ թվում՝ Ուկրաինային աջակցելու հարցում, կարեւոր է մեր համատեղ անվտանգության համար»,-նշել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը:

Ռուտտեն ընդգծել է նաեւ, որ Արկտիկան եւ Հյուսիսը գնալով ավելի կարեւոր են դառնում ՆԱՏՕ-ի հավաքական անվտանգության համար, եւ, հետեւաբար, դաշնակիցները մեծացնում են իրենց ուշադրությունը տարածաշրջանի նկատմամբ: Այս համատեքստում նա հայտնել է «Արկտիկական պահապան» զորավարժությունների մեկնարկի մասին: «Սա հստակորեն ցույց կտա մեր հանձնառությունը՝ ապահովելու Արկտիկայի, եւ, իհարկե, ամբողջ դաշինքի անվտանգությունը»,- եզրափակել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐ

ԼՈՒՎՐՈՒՄ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Ցուցահանդեսները Եվրոպական խորհրդում Կիպրոսի նախագահության մշակութային ծրագրի մի մասն են կազմում:



Ինչպես տեղեկանում ենք EWRONEWS -ից, Կիպրոսի նախագահ Նիկոս Քրիստոդուլիդեսը Փարիզում բացել է երկու կարեւոր ցուցահանդես, որոնք լուսաբանում են Կիպրոսի մշակութային ժառանգությունը եւ Ֆրանսիայի ու Եվրոպայի հետ նրա երկարատեւ կապերը, իր կնոջ՝ Ֆիլիպա Կարսերի ուղեկցությամբ: Արարողությանը ներկա էին նաեւ Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը եւ նրա կինը՝ Բրիջիտը:

Առաջին անգամ Լուվրի թանգարանը հյուրընկալում է կիպրոսյան 16 հնություն՝ Կիպրոսի մշակույթի նախարարության հնությունների վարչության շնորհիվ: Մասնավորապես, այս յուրահատուկ առարկաների միջոցով այցելուները կկարողանան հասկանալ կղզում էկկոլիթի եւ բրոնզի դարաշրջաններում զարգացած առեւտրային եւ մշակութային փոխանակումները:

Ցուցահանդեսը, որը բաց կլինի այցելուների համար մինչեւ 2026 թվականի հունիսի 22-ը, կազմակերպվում է Եվրոպական խորհրդում Կիպրոսի նախագահության մշակութային ծրագրի շրջանակներում:

Երկրորդ ցուցահանդեսի բացման համար, որը կտեւի մինչեւ 2026 թվականի հունիսի 14-ը, Ֆրանսիայի ազգային գրադարանը նշում է Աֆրոդիտեի կղզին՝ համագործակցելով Կիպրոսի բանկի մշակութային հիմնադրամի հետ:

Ֆրանսիայի Ազգային գրադարանում բազմաթիվ ցուցանմուշներ ներկայացնում են Կիպրոսը դարերի ընթացքում եւ բացահայտում ֆրանսիական վերաբերմունքը դրա նկատմամբ: Նկարիչ Լուի-Ֆրանսուա Կասասի փորագրությունները, ով այցելել է կղզի 1785 թվականին, ինչպես նաեւ 17-րդ եւ 18-րդ դարերի սրբապատկերները, որոնք փոխառվել են Կիպրոսի բանկի մշակութային հիմնադրամից եւ Նիկոսիայի Պանագիա Ֆաներոմենի եկեղեցուց, ընդգծում են ուղղափառ բյուզանդական ավանդույթի կարեւորությունը կիպրական ինքնության ձեւավորման գործում:

ԳՈՌՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎՆԱՍՎԱԾՔ Է ՍՏԱՑԵԼ

«Ինտեր Մայամիի» 38-ամյա արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին վնասվածք է ստացել էկվադորի «Բարսելոնայի» հետ ընկերական խաղում (2:2), հաղորդում է ամերիկյան ակումբի մամուլի ծառայությունը: Մեսին ձախ ազդրի մկանային ձգվածություն ունի: Վերականգնման համար կպահանջվի երկու շաբաթ: Մեսիի պայմանագիրն «Ինտեր Մայամիի» հետ նախատեսված է մինչեւ 2028թ. դեկտեմբեր: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 15 միլիոն եվրո: Անցած մրցաշրջանում Մեսին մասնակցել է 49 հանդիպման, խփել է 43 գոլ, կատարել 26 գոլային փոխանցում: Կոստա Ռիկայում փետրվարի 14-ին նախատեսված ընկերական հանդիպումները «Ինդեպենդիենտե դել Վալիեի» հետ հետաձգվել է եւ տեղի կունենա փետրվարի 26-ին:

ԿՔՆՆԱՐԿԻ

Լոնդոնի «Տոտենհեմը» դիմել է Մադրիդի «Աթլետիկոյի» գլխավոր մարզիչ Դիեգո Սիմեոնեին, հաղորդում է Indykaila News-ը: Արգենտինացի մասնագետը պատրաստ է քննարկել անգլիական ակումբի առաջարկը ամռանը: «Տոտենհեմը» գլխավոր մարզիչի պաշտոնից հեռացրել է Թոմաս Ֆրանկին, որն անցած ամռանն էր նշանակվել: Դիեգո Սիմեոնեն 2011 թվականից է գլխավորում «Աթլետիկոն», որի ղեկավարությունը մտադիր է ամռանը դիմել մարզչական փոփոխության: Անգլիայի Պրեմիեր լիգայի 26 տուրից հետո «Տոտենհեմը» 29 միավորով 16-րդն է:

ԿԱՇԽԱՏԵՆ

Բասկետբոլի կանանց Հայաստանի մինչեւ 16 տարեկանների հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում կշարունակի աշխատել Թադեւ Մարտիրոսյանը: Նրա գլխավորությամբ Մ16 կանանց հավաքականը 2025թ. դարձել է Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի փոխչեմպիոն: Նա կշարունակի գլխավորել նաեւ կանանց Հայաստանի ազգային հավաքականը, որն այս տարի կմասնակցի Փոքր երկրների Եվրոպայի կանանց առաջնությանը, որը կկայանա հունիսի 23-28-ը Կոսովոյում: Մրցակիցները Կոսովոյի եւ Անդորրայի թիմերն են: Մ18 կանանց Հայաստանի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնում կշարունակի աշխատել Սուրեն Արզումանյանը: Նրա գլխավորությամբ Մ18 կանանց հավաքականը նվաճել է Եվրոպայի առաջնության C դիվիզիոնի փոխչեմպիոնի կոչումը: Նշենք, որ Հայաստանի կանանց Մ16 եւ Մ18 հավաքականներն այս տարի կմասնակցեն Եվրոպայի C դիվիզիոնի առաջնություններին: Հայաստանի կանանց Մ16 հավաքականը ընդգրկված է Եվրոպայի C դիվիզիոնի B ենթախմբում, որտեղ կմրցի Ալբանիայի, Մոլդովայի եւ Ջիբրալթարի հավաքականների հետ: Մ16 կանանց Եվրոպայի C դիվիզիոնի առաջնության հանդիպումները կկայանան 2026թ. հուլիսի 7-12-ը Թա-Քալիում (Մալթա): Կանանց Մ18 հավաքականը ընդգրկված է C դիվիզիոնի B ենթախմբում, որտեղ կմրցի Կոսովոյի, Վրաստանի եւ Ջիբրալթարի հավաքականների հետ: Մ18 կանանց Եվրոպայի C դիվիզիոնի առաջնության հանդիպումները կկայանան հուլիսի 21-26-ը Պեժայում (Կոսովո):

ԱՇԽԱՐՀ

ԲՐԻԹՆԻ ՍՓԻՐՍԸ ՎԱՃԱՌԵԼ Է

Բրիթնի Սփիրսը «նշանակալից գործարք» է կնքել Primary Wave երաժշտական հրատարակչության հետ՝ վաճառելով իր բաժնեմասը երգերի կատալոգում, որը մեծապես սահմանել է փոփ երաժշտությունը 1990-ականների վերջին եւ 2000-ականներին: 2025 թվականի դեկտեմբերի վերջին կնքված իրավական փաստաթղթերը հաստատում են իրավունքների փոխանցումը, որը երգչուհու ամենամեծ բիզնես քայլերից մեկն է 2021 թվականին խնամակալության ավարտից ի վեր:

Rolling Stone-ի տվյալներով՝ համաձայնագիրը ներառում է Սփիրսի հոնորարները եւ նրա բաժինը իր ամբողջ ընդարձակ կատալոգի հրատարակչական իրավունքների մեջ, ներառյալ 1999-2016 թվականներին թողարկված ինը ստուդիական ալբոմները: Մինչդեռ բնօրինակ ձայնագրությունները, ըստ տեղեկությունների, կմնան Sony Music-ի մոտ, Primary Wave-ը այժմ ստանում է «Gimme More», «Womanizer» եւ «Circus» հիթերի հոսքային հեռարձակումից, ֆիլմերի եւ հեռուստատեսային տեղադրումներից, ինչպես նաեւ առեւտրային լիցենզավորումից ստացված եկամուտները:

2025 թվականի դեկտեմբերի 30-ին ստորագրված համաձայնագիրը, ըստ տեղեկությունների, գնահատվում է «ինը նիշանոց»: Փաստաթղթերում ճշգրիտ թիվը նշված չէ, բայց աղբյուրները համեմատում են գործարքը Ջասթին Բիբերի կատալոգի 2023 թվականին վաճառքի հետ՝ մոտավորապես 200 միլիոն դոլարով: Այս քայլը տեղավորվում է երաժշտական արդյունաբերության ավելի լայն միտման մեջ. վերջին տարիներին Բրյուս Սփրինգսթինի, Բոբ Դիլանի եւ Սթիվի Նիքսի նման լեգենդները դրամայնացրել են իրենց կատալոգները: Արվեստագետների համար դա միջոց է իրենց կյանքի ընթացքում ֆինանսական ժառանգություն ապահովելու համար, իսկ Primary Wave-ի նման ընկերությունների համար՝ ներդրում չինացող հիթերում:

ROLEX–Ը ԹԻՐԱԽԻ ՏԱԿ

Համաշխարհային շքեղ ժամացույցների շուկան բախվում է աննախադեպ մարտահրավերի. 2025 թվականին կորած եւ գողացված ժամացույցների ընդհանուր արժեքը հասել է ռեկորդային՝ 1.7 միլիարդ ֆունտ ստեռլինգի:

Watch Register-ի համաձայն՝ համաշխարհային տվյալների բազայում գրանցվել է 10,000 կորած կամ գողացված ժամացույց՝ միջինում յուրաքանչյուր 60 րոպեն մեկ: Հարթակն այժմ ցուցակագրում է 114,000 ժամացույց:

Տվյալների բազան թույլ է տալիս երկրորդային շուկայում գտնվող գնորդներին ստուգել ժամացույցների եզակի սերիական համարները՝ համոզվելու համար, որ իրենց վաճառվող ժամացույցը գողացված չէ: 2025 թվականին առցանց ստուգումների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 29%-ով՝ գերազանցելով 280,000 ստուգումը ամբողջ աշխարհում:

Գործարքների ընթացքում ժամացույցները ստուգելու համար օգտագործող ընկերությունների թիվը նույնպես աճել է 42%-ով՝ համեմատած 2024 թվականի հետ, ինչը վկայում է այս հանցագործությունների կանխարգելման գործիքի ակտիվ օգտագործման մասին:

«Ստուգումների եւ հաջող նույնականացումների թվի աճը ցույց է տալիս, թե որքան արդյունավետ է գլոբալ տվյալների համագործակցությունը օգնում զսպել գողացված ժամացույցների շուկան»,-նշել է Watch Register-ի կառավարիչ տնօրեն Կատյա Հիլզը:

Rolex-ը մնում է հանցագործների ամենատարածված թիրախը, որտեղ 2025 թվականին ապրանքանիշի մոդելները կազմում են բոլոր ստուգումների 44%-ը եւ կորած կամ գողացված ժամացույցների 51%-ը: Հաջողությամբ հայտնաբերված անհետ կորած եւ գողացված ժամացույցների թիվը նույնպես աճում է. անցյալ տարի գրանցվել է 1375 դեպք, ինչը 21%-ով ավելի է, քան 2024 թվականին հայտնաբերված 1136 մոդելները:

Մասնագետները կարծում են, որ այս թվերը ընդգծում են ինչպես խնդրի մասշտաբները, այնպես էլ շքեղ ժամացույցների շուկայում գնորդներին եւ առեւտրականներին պաշտպանելու թվային գործիքների արդյունավետությունը:

● *Փետրվարի 13-ին՝ ժամը 19:00-ին, Tashir Arena-ում տեղի կունենա «ԷԹԵՐՆԻԱ» թատերական-կրկեսային ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է համարվում ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք: Ուզում եմ իմանալ՝ կա արդյոք այդ գույքը անձի սեփականությունը լինելու որոշակի ժամանակահատվածի պահանջ:

Կարեն Դանիելյան, 37 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Կ. Դանիելյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով՝ ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույք՝ ֆիզիկական անձի անձնական գործածության օգտագործված իրերը, անձնական օգտագործման մեկ ավտոմեքենան եւ տնային օգտագործված գույքը, որոնք չունեն գործարանային փաթեթավորում ու պիտակավորում եւ ֆիզիկական անձի կողմից ձեռք են բերվել նախքան ՀՀ ժամանելը: Ընդ որում, անձնական օգտագործման ավտոմեքենան պետք է նախքան ՀՀ ներմուծվելը՝ վերջին անգամ հաշվառումից հանվելուց առաջ, առնվազն 6 ամիս հաշվառված լինի ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձի անունով այն երկրում, որտեղ ՀՀ մշտական բնակության ժամանող անձը վերջին անգամ մշտապես բնակվել է նախքան ՀՀ-ում որպես մշտական բնակիչ հաշվառվելը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 250-րդ հոդվածի դրույթներով՝ սահմանված ժամկետը խախտելու դեպքում Միության անդամ երկրների ռեզիդենտ ֆիզիկական անձինք կրում են այնպիսի պարտավորություններ, որոնք սահմանված են Միության եւ ՀՀ օրենսդրությամբ ավտոմեքենան ՀՀ ներքին սպառման նպատակով ներմուծելու համար:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կնքել եմ վարկային պայմանագիր, որից բխող պարտավորությունների ապահովման համար գրավադրել եմ իմ գույքը: Վճարումները չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում ի՞նչ հետեւանքներ կարող են լինել:

Սերգեյ Ստեփանյան, 39 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վարկի մարման եւ տոկոսների վճարման պարտականությունը չկատարելու կամ ժամանակին չկատարելու դեպքում վարկը դասակարգվում է՝ դառնալով ժամկետանց, որի դիմաց հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տույժեր: Պայմանագրում տույժերի վերաբերյալ դրույթներ նախատեսված չլինելու դեպքում տոկոսները հաշվարկվում են կետանցի (ուշացման) օրվանից մինչեւ պարտավորության դադարման օրը՝ ըստ համապատասխան ժամանակահատվածների համար ՀՀ կենտրոնական բանկի սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:

Եթե իրացման արդյունքում ավելացել է գումար, ապա ֆինանսական կազմակերպությունը պետք է վերադարձնի Ձեզ այդ գումարը, իսկ եթե ստացված գումարը բավարար չէ վարկային պարտավորություններն ամբողջությամբ մարելու համար, ապա Դուք պատասխանատու եք վարկային պայմանագրից բխող պարտավորությունների համար Ձեզ պատկանող մնացած գույքով: Միայն գրավատուն հանձնված գույքի գրավի դեպքում է, որ գույքի իրացումից հետո գրավատունն իրավունք չունի որեւէ պահանջ ներկայացնել պարտապանի նկատմամբ, եթե անգամ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն անբավարար է պահանջը լրիվ բավարարելու համար (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 255 հոդվածի 7-րդ կետ):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե վարկային պայմանագրի շրջանակներում առկա է գրավադրված գույք, ապա ֆինանսական կազմակերպությունը կարող է իրացնել գրավի առարկան եւ իրացման արդյունքում ստացված գումարը ուղղել վարկային պարտավորությունների կատարմանը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Աբովյան փողոցում

Երեւանում ակտիվորեն պատրաստվում են փետրվարի 14-ին՝ Վալենտինի օրվան, անցկացվում են մի շարք հատուկ միջոցառումներ՝ սիրո ու ռոմանտիկայի ոգով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 2 + 6
Կոտայքի լեռներ	0 - 3 + 2 + 5
Կոտայքի նախալեռներ	0 + 2 + 5 + 7
Գեղարքունիք	- 3 + 2 + 3 + 6
Լոռի	- 4 + 1 + 7 + 11
Տավուշ	- 2 + 2 + 8 + 11
Արագածոտնի լեռներ	0 - 4 + 1 + 4
Արագածոտնի նախալեռներ	- 1 + 3 + 4 + 8

Արարատ	+ 1 + 3 + 6 + 8
Արմավիր	+ 1 + 3 + 7 + 10
Վայոց ձորի լեռներ	0 - 4 + 2 + 5
Վայոց ձորի նախալեռներ	+ 1 + 4 + 6 + 10
Սյունիքի լեռներ	-3 - 6 + 1 + 4
Սյունիքի նախալեռներ	0 - 5 +10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 +12 + 15
Երեւան	+ 1 + 3 + 6 + 8

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*